

ԿՈԴ
050.0255 Ա. 28.09.12

28 սեպտեմբերի 2012 թվականի թիվ 255 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Ղ ՈՒ Մ Է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Արթուր Զավադյան

2012 թ. սեպտեմբերի 29
Երևան

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2012 թ. սեպտեմբերի 28-ի թիվ 255 Ա որոշմամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը
«Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

1. «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի կարարման¹ գործընթացը

2011 թվականին արձանագրված ՀՀ տնտեսության վերականգնման տեմպերի արագացման միտումը շարունակվեց նաև 2012 թվականին: Չնայած համաշխարհային տնտեսության աճի տեմպերի դանդաղմանը՝ տնտեսական զարգացումները տարվա ութ ամիսներին, ընդհանուր առմամբ, բնութագրվել են ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճով, արտադրական հզորությունների ավելացմամբ և ներքին պահանջարկի վերականգնման տեմպերի արագացմամբ: Արդյունքում՝ տնտեսական աճը տարվա առաջին եռամսյակի 5.6 տոկոս ցուցանիշի դիմաց երկրորդ եռամսյակում կազմեց 6.2 տոկոս: Գնահատվում է, որ տարվա երկրորդ կեսին տնտեսական աճի տեմպերի արագացումը կպահպանվի, ինչի արդյունքում տարվա համար կանխատեսված 7.1 տոկոս տնտեսական աճի ապահովումը իրատեսական է: Հարկ է նշել, որ տնտեսական աճի նման բարձր տեմպերի ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել ՀՀ Կառավարության կողմից հետճգնաժամային տարիներին մեկնարկած ՀՀ գործարար միջավայրի բարելավման, տնտեսության արտահանելի հատվածի, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների աջակցությանն ուղղված ծրագրերի շարունակական իրականացումը:

Հարկաբյուջետային քաղաքականությունը, ուղղորդվելով միջին ժամկետ հատվածում պարտքի արդյունավետ կառավարման և մակրոտնտեսական կայունության ապահովմանն ուղղված ռազմավարության դրույթներով, տարվա ընթացքում շարունակել է իրականացնել պակասուրդի կրճատմանն ուղղված քաղաքականություն: Վերջինս ուղեկցվել է դրամավարկային քաղաքականությամբ

¹ 2012 թվականի տարեկան բյուջեի կատարման գործընթացի վերլուծության հիմքում ընկած են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված տարվա յոթ ամիսների պետական բյուջեի նախնական փաստացի ցուցանիշները, իսկ տարվա համար սպասվող պետական բյուջեի ցուցանիշների հաշվարկման հիմքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականները: Ընդ որում, վերջինիս հիմքում այն ենթադրությունն է, որ 2012 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման արդյունքում ապահովվելու են բյուջեի ծրագրային ցուցանիշները, իսկ ՀՆԱ անվանական ցուցանիշը դեֆլյատորի ավելի ցածր մակարդակի կանխատեսման պարագայում ցածր կլինի տարվա համար կանխատեսված մակարդակից:

հետ արդյունավետ կոորդինացմամբ, որը մի կողմից՝ նպաստել է գնաճային ցածր միջավայրի ձևավորմանը, մյուս կողմից՝ նախադրյալներ ստեղծել տնտեսական աճի կայուն տեմպերով վերականգնման համար:

2012 թվականին ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրումը ընթացել է ծրագրված համամասնությունների ապահովման ուղղությամբ: Այսպես, 2012 թվականի յոթ ամիսների տվյալներով՝ հարկային եկամուտները՝ ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, ապահովել են ծրագրված մակարդակը և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել 7.1 տոկոսով: 2012 թվականի արդյունքում սպասվում է, որ հարկային եկամուտները՝ ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, կապահովեն տարվա համար ծրագրված մակարդակը՝ ապահովելով նախորդ տարվա նկատմամբ 12.8 տոկոս աճ: Ինչ վերաբերում է ՀՆԱ-ում հարկերի տեսակարար կշռի ծրագրված մակարդակի ապահովմանը, ապա տարվա համար սպասվող դեֆլյատորի ավելի ցածր մակարդակի պարագայում անվանական ՀՆԱ-ում հարկերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների տեսակարար կշիռը 0.6 տոկոսային կետով բարձր կլինի նախորդ տարվա ցուցանիշից և կկազմի ՀՆԱ 21.1 տոկոսը:

Պետական բյուջեի ծախսերի կատարումը տարվա յոթ ամիսներին ընթացել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի եռամսյակային համամասնությունների նկատմամբ զգալի տնտեսումների ձևավորմամբ, որի պարագայում փաստացի իրականացված ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ապահովել են շուրջ 2 տոկոս աճ: Տարվա արդյունքում ակնկալվում է, որ պետական բյուջեի ծախսերի ծրագրված մակարդակի ապահովման պարագայում ծախսերը կկազմեն սպասվող ՀՆԱ-ի շուրջ 25.0 տոկոսը:

2012 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը, ըստ գնահատականների, կկազմի ՀՆԱ-ի 2.8 տոկոսը կամ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ տարվա համար ծրագրված 3.1 տոկոսի դիմաց:

Ամփոփելով՝ նշենք, որ ՀՀ Կառավարության կողմից մակրոտնտեսական կայունության և տնտեսական աճի խթանման ապահովմանն ուղղված 2012 թվականի ծրագրերի հետևողական և շարունակական իրականացման, ինչպես նաև հարկաբյուջետային և դրամավարկային կոորդինացված քաղաքականությունների շարունակականության պայմաններում հնարավոր կլինի ապահովել 2012 թվականի համար նախանշված տնտեսական աճի բարձր մակարդակը և գնաճը ձևավորել 4+/-1.5 տոկոսային կետ նպատակային թիրախում:

**2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը
«Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

2013 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագիրն ընդհանուր առմամբ հիմնված է 2012 թվականի հունիսի 20-ին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած՝ ՀՀ Կառավարության ծրագրի առանցքային հիմնադրույթների և հիմնական նպատակային ցուցանիշների ապահովման վրա: Այն, ըստ էության, իրենից ներկայացնում է մակրոտնտեսական կայունության ապահովման ու տնտեսական կայուն աճի խթանմանը նպաստող՝ 2012 թվականին ՀՀ Կառավարության կողմից իրականացված միջոցառումների շարունակությունը: Մասնավորապես, շարունակելով բյուջեի պակասուրդի կրճատմանն ուղղված միջոցառումների իրականացումը, 2013 թվականին նախատեսվում է բյուջեի պակասուրդը հասցնել մինչև ՀՆԱ-ի 2.6 տոկոսի, որը 0.2 տոկոսային կետով ցածր է 2012 թվականին սպասվող նույն ցուցանիշից: Պետական բյուջեի պակասուրդի նման կրճատումը տնտեսական աճի կանխատեսված բարձր մակարդակի պայմաններում կնպաստի պետական պարտքի բեռի աստիճանական նվազեցման ապահովմանը:

2013 թվականի բյուջեի ծրագիրը պետական բյուջեի եկամուտների հավաքագրման մասով նույնպես բարելավմանն ուղղված միջոցառումների շարունակական իրականացում է նախատեսում, որի շնորհիվ հնարավոր կլինի տարվա արդյունքում ապահովել հարկային եկամուտների և տուրքերի 13.7 տոկոս աճ և ՀՆԱ-ում 0.8 տոկոսային կետ աճ²: Տարվա համար նախատեսված հարկային եկամուտների և տուրքերի տարեկան ցուցանիշի 5.9 տոկոսը նախատեսվել է ապահովել վարչարարական միջոցառումների և օրենսդրական փոփոխությունների իրականացման շնորհիվ³:

Մինևույն ժամանակ, հարկ է նշել, որ 2013 թվականին ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի մեծացման և տնտեսական աճի 6.2 տոկոս ցուցանիշի կանխատեսման հիմքում ընկած համաշխարհային տնտեսության զարգացումների սցենարը ենթադրում է վերջինիս վերականգնման շարունակականություն, ինչը որոշակի ռիսկեր է պարունակում: Այս պարագայում կարևորվում է հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների կիրարկման և վարչարարական միջոցառումների արդյունավետությունը՝ 2013 թվականին հարկեր/ՀՆԱ հարաբերակցության նախանշված մակարդակի ապահովման տեսանկյունից:

Անդրադառնալով պետական բյուջեի ծախսերի ուղղությամբ վարվող քաղաքականությանը՝ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ պետական բյուջեի ծախսերի նախորդ տարվա ծրագրվածի նկատմամբ նախատեսված 10.3 տոկոս անվանական

² Նշված ցուցանիշը հաշվարկվել է 2012 թվականի համար սպասվող ՀՆԱ-ի մեջ հաշվարկված հարկերի և պարտադիր սոցապ վճարների 21.1 տոկոսի նկատմամբ:

³2013 թվականի համար նախատեսված հարկային եկամուտների 30.9 մլրդ դրամը օրենսդրական փոփոխությունների հաշվին է, իսկ 27.7 մլրդ դրամը՝ վարչարարական միջոցառումների:

աճը ուղեկցվելու է ՀՆԱ-ում ծախսերի 0.6 տոկոսային կետ աճով: Ընդ որում, կապիտալ ծախսերի գծով նախատեսվել է նախորդ տարվա ծրագրվածի նկատմամբ 33.0 տոկոս աճի ապահովում, որի պարագայում այն կկազմի ընդհանուր ծախսերի 16.9 տոկոսը և ՀՆԱ-ի 4.3 տոկոսը՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 0.8 տոկոսային կետով, ինչը կնպաստի տնտեսական աճի ապահովմանը: Ինչ վերաբերում է ընթացիկ ծախսերին, ապա նախատեսվել է նախորդ տարվա ծրագրվածի նկատմամբ ՀՆԱ-ում 0.2 տոկոսային կետ նվազում, որը հիմնականում բաժին է ընկնում սոցիալական բնույթի ծախսերին: Վերջինս հիմնականում պայմանավորված է սոցիալական բնույթի ծախսերի մեջ կատարվող կառուցվածքային փոփոխություններով, որոնք իրականացվելու են՝ ելնելով ծախսերի հասցեականության մակարդակի բարձրացման ապահովումից, մասնավորապես ճշգրտվելու է կենսաթոշակ և սոցիալական նպաստ ստացողների թվաքանակը: Արդյունքում՝ սոցիալական բնույթի ծախսերը 2013 թվականին կկազմեն ՀՆԱ-ի 10.6 տոկոսը՝ նախորդ տարվա համար ծրագրված 11.3 տոկոսի դիմաց:

Վերոհիշյալ միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր կլինի նպաստավոր նախադրյալներ ստեղծել միջին ժամկետ հատվածում տնտեսության կայուն զարգացման համար: Միաժամանակ, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետ կոորդինացումը կշարունակի նպաստել մակրոտնտեսական կայունությանը՝ արդյունքում գնաճը 2013 թվականի ընթացքում պահպանելով 4 ± 1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում: